



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ ԵՎ ԳԻՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐ  
ՀՐԱՄԱՆ

No 545-Ա/Ք

14.05.2014թ.

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ ԵՎ ԳԻՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ  
ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ԱՐՏԱՔԻՆ ԿԱՊԵՐԻ ԵՎ ՍՓՅՈՒՌՔԻ ՎԱՐՉՈՒԹՅԱՆ  
ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ԵՎ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ  
ԿՐԹՈՒԹՅԱՆ ԵՎ ԳԻՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐԻ 2013 ԹՎԱԿԱՆԻ ՕԳՈՍՏՈՍԻ 1-Ի  
ԹԻՎ 1006-Ա/Ք ՀՐԱՄԱՆՆ ՈՒԺԸ ԿՈՐՑՐԱԾ ՃԱՆԱԶԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2002 թվականի սեպտեմբերի 12-ի թիվ 1579-Ն որոշմամբ հաստատված հավելված 1-ի 31-րդ կետը և ղեկավարվելով <Իրավական ակտերի մասին> Հայաստանի Հանրապետության օրենքի 72-րդ հոդվածով.

ՀՐԱՄԱՅՈՒՄ ԵՄ՝

1. Հաստատել Հայաստանի Հանրապետության կրթության և գիտության նախարարության աշխատակազմի արտաքին կապերի և սփյուռքի վարչության կանոնադրությունը՝ համաձայն հավելվածի:
2. Ուժը կորցրած ճանաչել 2013 թվականի օգոստոսի 1-ի <Հայաստանի Հանրապետության կրթության և գիտության նախարարության աշխատակազմի արտաքին կապերի և սփյուռքի վարչության կանոնադրությունը հաստատելու և Հայաստանի Հանրապետության կրթության և գիտության նախարարի 2010 թվականի մայիսի 11-ի թիվ 352-Ա/Ք հրամանն ուժը կորցրած ճանաչելու մասին> թիվ 1006-Ա/Ք հրամանը:

Ա. ԱՇՈՏՅԱՆ

Հավելված  
ՀՀ կրթության և գիտության նախարարի  
2014 թ. մայիսի 14-ի 545-Ա/Ք հրամանի

## **ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹՅՈՒՆ**

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ ԵՎ ԳԻՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ  
ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ԱՐՏԱՔԻՆ ԿԱՊԵՐԻ ԵՎ ՍՓՅՈՒՌՔԻ ՎԱՐՉՈՒԹՅԱՆ**

## I. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

1. Հայաստանի Հանրապետության կրթության և գիտության նախարարության (այսուհետ՝ Նախարարություն) աշխատակազմի (այսուհետ՝ Աշխատակազմ) արտաքին կապերի և սփյուռքի վարչությունը (այսուհետ՝ Վարչություն) կառուցվածքային ստորաբաժանում է:
2. Վարչությունն իր գործունեության ընթացքում ղեկավարվում է Հայաստանի Հանրապետության Սահմանադրությամբ, <Քաղաքացիական ծառայության մասին> Հայաստանի Հանրապետության օրենքով, Հայաստանի Հանրապետության աշխատանքային օրենսդրությամբ, <Պետական կառավարչական հիմնարկների մասին> Հայաստանի Հանրապետության օրենքով, Հայաստանի Հանրապետության Նախագահի հրամանագրերով և կարգադրություններով, Հայաստանի Հանրապետության կառավարության և վարչապետի որոշումներով, Հայաստանի Հանրապետության կրթության և գիտության նախարարի (այսուհետ՝ Նախարար) և աշխատակազմի ղեկավարի հրամաններով, սույն կանոնադրությամբ, ինչպես նաև Վարչության լիազորությունների հետ կապված այլ իրավական ակտերով:
3. Վարչության կանոնադրությունը հաստատում է Նախարարը:

## II. ՎԱՐՉՈՒԹՅԱՆ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԸ ԵՎ ԳՈՐԾԱՌՈՒՅԹՆԵՐԸ

4. Վարչությունը բաղկացած է հետևյալ բաժիններից.

- 1) արտաքին կապերի բաժին,
- 2) սփյուռքի հետ կապերի բաժին:

### 5. Արտաքին կապերի բաժին

- 1) մշակում է կրթության ոլորտին առնչվող Հայաստանի Հանրապետության իրավական ակտերի, միջազգային պայմանագրերի, համագործակցության հուշագրերի նախագծերը.
- 2) ապահովում է կրթության ոլորտում միջազգային համագործակցության զարգացման գործընթացը.
- 3) Հայաստանի Հանրապետության արտաքին քաղաքականության գերակա ուղղությունների համաձայն իրականացնում է կրթության բնագավառի համագործակցության զարգացմանն ուղղված միջոցառումները.
- 4) մշակում է միջազգային ոլորտում կրթական կարիքների բավարարմանն ուղղված զարգացման երկարաժամկետ և միջնաժամկետ պետական ծրագրերը, իրականացնում է դրանց մշտադիտարկումն ու գնահատումը.
- 5) կազմակերպում է կրթական միջազգային կառույցներին միանալու և ծրագրերում ընդգրկվելու աշխատանքներ.
- 6) մասնակցում է կրթության զարգացման պետական ծրագրի մշակմանը և դրա համակարգման աշխատանքներին.
- 7) կազմակերպում է կրթության բնագավառում միջպետական համագործակցության ծրագրերի մշակումը, իրականացումը և դրանց մշտադիտարկմանը.
- 8) կազմակերպում է օտարերկրյա պետությունների բարձրագույն ուսումնական հաստատություններում միջազգային պայմանագրերով սահմանված կրթաթոշակային տեղերի մրցույթների գործընթացը.

- 9) Կազմակերպում և համակարգում է օտարերկրյա քաղաքացիների Հայաստանի Հանրապետության բարձրագույն ուսումնական հաստատություններում ընդունելության և կացության կարգավիճակի տրամադրման, օտարերկրյա քաղաքացիների Հայաստանի Հանրապետությունում ուսանելու համար անհրաժեշտ փաստաթղթերի փորձաքննության և հաշվառման գործընթացը.
- 10) մեթոդական խորհրդատվություն է տրամադրում միջազգային գործընթացներ իրականացնող կազմակերպություններին և անձանց.
- 11) համակարգում է Հայաստանի Հանրապետությունում գործող օտարերկրյա դիվանագիտական ծառայությունների և միջազգային կազմակերպությունների հետ կրթական աշխատանքները
- 12) հաշվառում է արտերկրում ուսանող միջպետական համաձայնագրերի շրջանակներում գործուղված ՀՀ քաղաքացիներին և Հայաստանի Հանրապետությունում սովորող օտարերկրյա քաղաքացիներին.
- 13) պարբերաբար հաշվետվություններ և տեղեկանքներ է տրամադրում Հայաստանի Հանրապետության կրթական համակարգի միջազգային գործունեության մասին.
- 14) իրականացնում է Աշխատակազմի կառուցվածքային և առանձնացված ստորաբաժանումների, Նախարարության ենթակա կազմակերպությունների միջազգային համագործակցության հաշվառում,
- 15) կազմակերպում է կրթության ոլորտում միջպետական պայմանագրերի դրույթների և Հայաստանի Հանրապետության պարտավորությունների իրականացման գործընթացը.
- 16) սահմանված կարգով մասնակցում է կրթության բնագավառին առնչվող հարցերի վերաբերյալ միջազգային պայմանագրերի մշակմանն ու քննարկմանը.
- 17) իրականացնում է ՀՀ կրթության և գիտության նախարարության մասնակցությամբ միջազգային համագործակցության շրջանակներում միջոցառումների նախապատրաստական աշխատանքները և վարում դրանց արձանագրումը.
- 18) իրականացնում է նախարարության հետ կրթության ոլորտում համագործակցության նպատակով ՀՀ պաշտոնական այցով ժամանած պաշտոնյաների և պատվիրակությունների ընդունելությունը.
- 19) իրականացնում է ՀՀ կրթության և գիտության նախարարությունում հանդիպումների և միջոցառումների արարողակարգը,
- 20) կազմակերպում է արտասահմանյան գործուղումների գործընթացը, վարում է գործուղումների արարողակարգը, գործուղումների վերաբերյալ հաշվետվությունների ներկայացումը:

## 6. Սփյուռքի հետ կապերի բաժին

- 1) Մշակում է սփյուռքի ոլորտին առնչվող Հայաստանի Հանրապետության իրավական ակտերի նախագծերը.
- 2) Մշակում է սփյուռքի կրթական կարիքների բավարարմանն ուղղված զարգացման երկարաժամկետ և միջնաժամկետ պետական ծրագրերը, իրականացնում է դրանց մշտադիտարկումն ու գնահատումը.
- 3) Մասնակցում է կրթության և գիտության ոլորտում սփյուռքահայ գործիչների պետական պարգևների ներկայացման և նախարարության պարգևների շնորհման աշխատանքներին.
- 4) Ուսումնասիրում է սփյուռքի կրթական կարիքները և ստեղծում համապատասխան տեղեկատվական բազաներ.

- 5) Մշակում և մշտադիտարկում է սփյուռքում կրթական գործունեության պահպանմանը և զարգացմանն ուղղված ծրագրերը.
- 6) Ապահովում է համագործակցություն նախարարության և սփյուռքի կրթական, բարեգործական ու եկեղեցական միությունների միջև.
- 7) Կազմակերպում է համահայկական համաժողովներ, խորհրդակցություններ կրթության և գիտության ոլորտում գործող այլ հաստատությունների հետ.
- 8) Կազմակերպում և համակարգում է օտարերկրյա քաղաքացիների Հայաստանի Հանրապետության բարձրագույն ուսումնական հաստատություններում ընդունելության և կացության կարգավիճակի տրամադրման, օտարերկրյա քաղաքացիների Հայաստանի Հանրապետությունում ուսանելու համար անհրաժեշտ փաստաթղթերի փորձաքննության և հաշվառման գործընթացը.
- 9) Մասնակցում է Հայաստանի Հանրապետությունում սփյուռքի ազգային դաստիարակության փորձից բխող պետական ծրագրերի ներդրմանը:
- 10) Իր իրավասությունների շրջանակում աջակցում է կրթության և գիտության ոլորտում գործող հաստատությունների և մասնագետներին սփյուռքի կրթական գործունեության , պահպանմանն ու զարգացմանն ուղղված ծրագրերի իրականացման գործում:
- 11) Համակարգում է սփյուռքի կրթական գործունեության պահպանմանն ու զարգացմանն ուղղված պետական ծրագրերը և մասնակցում է դրանց իրականացմանը:

### **III. ՎԱՐՉՈՒԹՅԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄԸ, ՂԵԿԱՎԱՐՈՒՄԸ ԵՎ ՀԱՄԱԿԱՐԳՈՒՄԸ**

7. Վարչության գործունեությունը վերահսկում է Աշխատակազմի ղեկավարը:
8. Վարչության գործունեությունը համակարգում և ղեկավարում է Վարչության պետը:
9. Վարչության ընթացիկ գործունեությունը կազմակերպում են բաժնի պետերը:
10. Վարչության պետը, վարչության պետի տեղակալը, բաժնիների պետերը և աշխատողները համարվում են քաղաքացիական ծառայողներ:
11. Վարչության պետի, վարչության պետի տեղակալի, բաժնի պետերի և աշխատողների աշխատանքի կազմակերպման և ղեկավարման պատասխանատվության, որոշումներ կայացնելու լիազորությունների, շփումների և ներկայացուցչության, խնդիրների բարդության և դրանց ստեղծագործական լուծման, գիտելիքների և հմտությունների, իրավունքների և պարտականությունների, քաղաքացիական ծառայության դասային աստիճանի հետ կապված դրույթները սահմանվում են քաղաքացիական ծառայության պաշտոնների անձնագրերով: